ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
«ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

ՀՀ Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Մարշալ Բաղրամյան թաղամաս, Պուրակային 32, Հեռ. (+374 223) 7 30 03, էլ. փոստ
hrazdanibk@mail.ru

22.07.2024թ N 337

Որոշում N ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0101-6

,,Ագաստ,,ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերավերյալ

2023 թվականի նոյեմբերի 6-ին ,,Հրազդան բժշկական կենտրոն,, ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է ,, ԴԵՂՈՐԱՅՔԻ,, ձեռք բերման նպատակով ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0101 ծածկագրով մրցույթ: Մրցույթին հայտ է ներկայացրել և 1-ին .5-րդ. 7-րդ. 10-րդ. 13-րդ. 44-րդ. 46-րդ .50-րդ. 62-րդ. 64-րդ. 70-րդ. 72-րդ. 75-րդ. 85-րդ. 98-րդ.100-րդ. 27-րդ, չափաբաժիններով ընտրված մասնակից է համարվել ,,Ագաստ,, ՍՊԸ-ն, որի հետ էլ 05.12.2023 թվականին կնքվել է ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0101-6 պայմանագիր:

Համաձայն պայմանագրին կից ,, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ,, հավելված 1-ի, մատակարարման ժամկետ է սահմանվել ,, **Դեղորայքի ձեռք բերումը կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 25.12.2024թ,,** և նշվել է ****Ապրանքի մատակարարումը պետք է կատարվի պատվերի սահմաններում,, :***

,,Հրազդան ԲԿ,,ՓԲԸ-ի պատասխանատու ստորաբաժանման կողմից բազմիցս կատարվել են բանավոր պատվերներ, որոնք մնացել են անպատասխան: Որից հետո 04.07.2024 թ. Թիվ 304 գրությամբ / կցվում է/ կատարվել է պատվեր, որտեղ նշվել է, որ եռօրյա ժամկետում պետք է կատարվեն մատակարարումներ նշված չափաբաժիններով և քանակներով: Սակայն մատակարարում չի իրականացվել և չի տրվել հիմնավորում: Այնուհետև ,,Հրազդան ԲԿ,,ՓԲԸ 09.07.2024թ թիվ 307 գրությամբ/ կցվում է / նորից դիմել է ,,Ագաստ ,,ՍՊԸ-ին՝ կատարելու օրենքով սահմանված պարտավորությունները, միաժամանակ նշելով , որ չկատարման դեպքում կկիրառվի 04.05.2017թ թիվ 526-ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետը: Սակայն մատակարար կազմակերպության կողմից նորից պատասխան չի ստացվել:

1. Հիմնավորում և եզրահանգում

Համաձայն ,,Գնումների մասին,,ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության 2017թ. Մայիսի 4-ի թիվ 526-ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետի, , պայմանագրի 2.1.7 և 8.11 կետերի, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածը, 466-րդ հոդվածի 3-րդ մասը,,, ,,Հրազդան բժշկական կենտրոն,,ՓԲԸ-ն հրաժարվել է պայմանագրից, համարելով այն միակողմանի լուծված:

,,Գնումների մասին,, օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե

ա) Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

բ) Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիքով պայմանավորված:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Պայմանագրի 2.1.7 և 8.11 կետերի

Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակվելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, որոշում եմ ,,Ագաստ,, ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ ԿԱՐԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Կատարող՝ Լ.Նավասարդյան

☎ (077)-44-81-41